

ԳՐԵՏԱ ՀԱԿՈՐՅԱՆ
ԱՆԻ ՀԱԿՈՐՅԱՆ

ԻՆԴԻԳՈ ԵՐԵՆԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ
ՄԱՆԿԱԿԱՐԺԱՅՈՒԹԵՔԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Մենք ապրում ենք գլոբալ տեղաշարժերի ժամանակաշրջանում, ակամատես և մասնակից ենք համաճորակային, ավելին, տիեզերական փոփոխությունների: Աշխարհում նոր երեխաներ են ծնվում, որոնք իրենց վարքով, մտածելակերպով, ընդունակություններով տարբերվում են սովորական երեխաներից:

Տարբեր երկրներում այդ երեխաներին տարբեր են անվանում. օրինակ՝ ճապոնիայում նրանց անվանում են լույսի երեխաներ, Չինաստանում՝ էքստրասենսներ, Գերմանիայում՝ աստղային կամ տիեզերքի երեխաներ, Ռուսաստանում՝ նոր գիտակցությամբ երեխաներ, Մեծ Բրիտանիայում՝ հազարամյակի երեխաներ, Ամերիկայում՝ ինդիգո երեխաներ:

1978 թվականին ամերիկացի հոգեբան, կենսաէներգետիկ, պայծառատես Նենսի ԷՆՆ Թեփլը զարմանալի բացահայտում արեց. նա համոզված էր, որ մարդու մեջ փոփոխությունները մեծ չափով պայմանավորված են նրա էներգետիկ մարմնի՝ աուրայի գույների փոփոխությամբ: Նենսի ԷՆՆ Թեփլը հայտնաբերեց երեխաների՝ կապտամանուշակագույն աուրայով(այդ գույնը նկարիչներն անվանում են ինդիգո) ի դեպ, սովորական երեխաների աուրան ոսկեգույն է: 1982թ. Նենսի ԷՆՆ Թեփլը հրատարակեց «Ինչպես գույների միջոցով հասկանալ կյանքը. գույների և աուրայի վերաբերյալ մետաֆիզիկական հասկացություններ»(Understanding your life through color: Metaphysical concepts in color and aura) գիրքը. դա գիտական առաջին հրատարակությունն էր, որում բնութագրվում էին «նոր երեխաների» վարքի մոդելները: Հեղինակը դասակարգեց մարդու վարքի որոշակի տեսակներ ըստ գուներանգների՝ ստեղծելով զարմանալիորեն ճշգրիտ և ակնառու համակարգ(4):

«Աուրա» բառը լատիներեն ծագում ունի. aura նշանակում է քամու, զեփյուռի շուրջ, սոսափյուն, մաև անտեսանելի կենսաէներգետիկ թաղանթ մարդու մարմնի շուրջ, լուսավոր պատյան, որ գերզգայուն մարդիկ միայն ի վիճակի

են տեսնել, այն հագեցած է ծիածանի տարբեր գույներով, որոնցից յուրաքանչյուրը որոշակի իմաստ ունի: Աուրան մաև մեկնաբանվում է՝

1. ըստ կրոնական պատկերացումների՝ ճառագայթում, շողարձակում, աստվածային էություններին և սրբերին շրջապատող լուսապսակ (halo-սրբապատկերներում՝ շրջանակի տեսքով շողարձակում գլխի շուրջ),
2. ըստ պարապսիխոլոգիայի (գիտություն, որը զբաղվում է հոգեֆիզիկական գերբնական երևույթների ուսումնասիրությամբ)՝ հատուկ դաշտ, որը ստեղծվում է կենսաբանական օրգանիզմների շուրջ,
3. ֆիզիկայում՝ առարկայից նրա շուրջ էլեկտրական ալիքների ճառագայթում անտեսանելի օդային լուսապսակի՝ օրեղի տեսքով(3):

Ինդիգո երեխաները սովորական երեխաներից տարբերվում են բարձր զարգացած ներըմբռնմամբ, բնավորության գծերով, հոգևոր բարձր էությամբ և աշխարհի մասին գիտելիքների պաշարով:

Անցյալ դարի 90-ական թվականների կեսերին ինդիգո երեխաների հիմնախնդրով սկսեցին զբաղվել ամերիկացի հոգեբաններ Լի Քերոլը և Ջեն Թոուբերը. նրանց հաճախ էին դիմում անկառավարելի, գերակտիվ երեխաների ծնողները, քանի որ դաստիարակության ավանդական մեթոդներն անգոր էին այդ երեխաների դաստիարակության գործում: Ինդիգո երեխաների քանակը տարեցտարի ավելանում է, և շուտով նրանք ճնշող մեծամասնություն կկազմեն: Ոչ պաշտոնական տվյալներով՝ անցյալ դարի 80-ական թթ. ինդիգո երեխաները կազմում էին երեխաների ընդհանուր թվի 15%-ը, ներկայումս 2-3 տարեկան երեխաների մեջ ինդիգո երեխաները կազմում են նրանց ընդհանուր թվի 80-90%-ը: Այսօր շատ գիտնականներ համոզված են, որ ինդիգո երեխաների ԴՆԹ-ի կառուցվածքը տարբեր է, և որ նրանք եկել են՝ փրկելու աշխարհը: Այսօր արդեն աշխարհում հաշվվում են 30 միլիոն, որոշ տվյալներով՝ մինչև իսկ 60 միլիոն այդպիսի երեխաներ, առկա է փաստագրական ստվարածավալ նյութ: Անշուշտ, դժվար է հավատալ անհավանական պատմություններին, սակայն փաստերն առավել քան խոսում են: Լի Քերոլից և Ջեն Թոուբերից բացի ամբողջ աշխարհում ինդիգո երեխաների հիմնախնդրով զբաղվում են շատ մասնագետներ, նկարահանվում են ֆիլմեր, հատուկ դպրոցներ և կենտրոններ են ստեղծվում այդ երեխաների համար:

Զնայած նրան, որ ինդիգո երեխաների գոյության փաստը համընդհանուր ճանաչում ունի, այդ երևույթի վերաբերյալ տակավին գիտական ապացույցներ չկան. ժամանակակից մանկավարժագիտության մեջ «ինդիգո երեխաներ» եզրույթը դեռևս լայն կիրառում չունի:

Շատ մանկավարժներ և հետազոտողներ հակված են այն կարծիքին, որ «ինդիզո երեխաներ» երևույթն ինքնին միատիպ է: Ավելին, ինդիզո երեխաների շատ հատկանիշներ, այն է՝ ուշադրության պակասը կամ եռանդունությունը, բռնկունությունը, վարքի և տրամադրության կտրուկ փոփոխությունները, ոչ բարենպաստ հանգամանքների դեպքում մահ ընկճախտի(դեպրեսիա) նկատմամբ հակումը վաղուց արդեն հոգեբույժների և նյարդաբանների կողմից ախտորոշվում են որպես ուշադրության պակասի կամ դրա հետևանքով գերակտիվության համախտանիշ՝ ADD և ADHD (Attention Deficit Disorder, Attention Deficit Hyperactive Disorder): Տևական ժամանակ նրանց որակում էին որպես «դժվար» երեխա: Կարելի է բազմաթիվ օինակներ բերել, վարքի և գործունեության առանձնահատկություններ նշել, նախանշել դաստիարակության տարբերակներ, այնուհանդերձ ինդիզո երեխաների ուսումնասիրությունը միակողմանի կընթանա, դաստիարակության մեթոդներն անհնարին կլինեն, քանի դեռ նոր մտածողությամբ երեխաների երևույթը խորապես ուսումնասիրված չէ:

Ինդիզո երեխան արդեն իսկ ճանաչելի է 2-3 տարեկանից, չնայած ծննդյան պահից արդեն նա կարող է դրսևորել բնավորության որոշ գծեր: Ինդիզո երեխան իր նկատմամբ հրամայողական վերաբերմունք չի հանդուրժում և հեղինակություններ չի ընդունում: Ոչ սովորական երեխաները բնությունից օժտված ստեղծագործ անհատականություններ են, ունեն վերացական մտածողություն, տաղանդավոր են ու խելացի: Հաճախ անկառավարելի են, ազատասեր, վերահսկողության չեն ենթարկվում, կարող են զարմացնել իրենց բարձր պատասխանատվությամբ և սոցիալական հիմնախնդիրների ընկալմամբ, մանկական տարիքին ոչ բնորոշ դատողություններով: Իրենց գերընդունակությունների շնորհիվ նրանք ավելորդ հարցեր չեն տալիս, պարզապես ինքնաբացահայտման համար մեծահասակների աջակցության կարիք ունեն և ուշադրություն են պահանջում:

Այնուհանդերձ ինչպե՞ս ճանաչել ինդիզո երեխաներին: Նրանք տարբերվում են խելացի, խորաթափանց, լուսավոր, իմաստուն հայացքով, որը ձգողական մեծ ուժ ունի: Այն տպավորությունն է, որ երեխան գիտի քո մասին, ռեմտգենյան ճառագայթների նման բննախույզ հայացքով զննում է քեզ: Ինդիզո երեխաներն ի ծնե օժտված են պայծառատեսությամբ, որը նրանց հնարավորություն է տալիս տեսնել և իմանալ, թե ինչ է զգում դիմացինը, արդյոք նա ազնիվ է, ունի արդյոք հիվանդություն՝ ընդսնին փորձելով օգնել նրան: Անսխալ զգում են կեղծիքն ու չարությունը: Նրանք անմիջապես զգում են ցածր հաճախականության այն մթնոլորտը, որը շրջապատում է ստախոս, չար, անհավա-

սարակչի, հարձակողական տրամադրված մարդուն, և բացահայտորեն հակադրվում կամ մերժում են նրան:

Ինդիգո երեխաները բնության առեղծվածներ են, նրանք հիացմունք և հետաքրքրություն են հարուցում և առաքելություն ունեն՝ աշխարհում հաստատել ներդաշնակություն, սովորել մտքերով և զգացմունքներով կառավարել կենսաէներգետիկ նուրբ կառուցվածքների աշխարհը: Նրանք համոզված են, որ իրենց է վերապահված մարդկության համար կարևոր խնդիրներ լուծել երկիր մոլորակի վրա: Նրանց գիտակցությունը տարբերվում է սովորական երեխաների գիտակցությունից: Ինդիգո երեխաների մեջ հաճախ են համադրվում հակասական զգացումներ՝ սերը մարդկանց նկատմամբ և օտարումը, խուսափողականությունը: Ինդիգո երեխաները կարող են ինքնամփոփ, զգացմունքային, անհավասարակշիռ լինել, որի պատճառը շրջապատի կողմից չհասկացվելն է: Չնայած իմացական հզոր ներուժին՝ հաճախ են պատահում, որ դժվար են յուրացնում հանրակրթական ծրագրերը, առաջադրանքները կատարելիս շուտ են հոգնում: Առաջնորդվելով սեփական ներքին չափանիշներով՝ նրանք գիտելիքները բաժանում են կարևորների և ոչ կարևորների: Հատկապես դժվարանում են քննություններ հանձնել՝ չհասկանալով, թե ինչու պետք է ինչ-որ մեկին պատասխանատու լինեն: Փոքր տարիքից արդեն տարբերվում են ոչ սովորական վարքով, տիրապետում են լիդերական որակների, դեմ են դաստիարակության կարծրատիպերին, փորձում են ինքնահաստատվել, առաջարկում են հիմնախնդրի անսպասելի, ոչ ստանդարտ լուծումներ: Ինդիգո երեխաներն օժտված են համակարգչային կարողություններով, արագ յուրացնում են թվային տեխնոլոգիաներ հիմնականում ինքնուրույն և միայն իրենց ներհատուկ մեթոդներով: Նրանք կենսական դարաշրջանի փոփոխության երեխաներ են և մարդկանց առջև այլ աշխարհի դուռ են բացում, որում մարդկությունը կնվաճի նոր կարգավիճակ և կլինի ավելի կատարյալ:

Ինդիգո երեխաներն ունեն բարձր ինքնագնահատական, անհամբեր են, երազկոտ, դժվար են հարմարվում և հաղորդակցվում, կարող են միաժամանակ մի քանի զբաղմունք ունենալ, գիտելիքների մի բնագավառից արագորեն տեղաշարժվել մյուսը, ուշադրությունը դժվար են կենտրոնացնում և հեշտությամբ են շեղվում: Չեն թաքցնում զայրույթը, դյուրաբորբոք են, չեն սիրում այնպիսի արարողություններ, որոնք ստեղծագործական ներուժ չունեն:

Ինդիգո երեխաները հաճախ են ուսումնական հաստատություններ փոխում, չեն կարողանում հարմարվել այն միջավայրին, որտեղ իշխում են վարչա-հրամայական մեթոդները, սուտը, կեղծիքը, չարությունը, դաժանությունը: Շատ ծնողներ և մանկավարժներ նրանց երեսառած եսասերներ են համարում, սա-

կայն դա այդպես չէ. ինդիգո երեխաների հետ զբաղվող մասնագետները նշում են, որ նրանք մեծահոգի են, նպատակասլաց և հակված են այլասիրության: Ինդիգո երեխաները որոշակի խնդիրներ և նպատակներ ունեն, կողմնորոշված չեն դեպի նյութական արժեքները. նոր սերնդի երեխաների համար կարևոր է հոգևորի վերածնունդը, որն իրականացնում են սեփական օրինակով:

Կրթության ավանդական հարացույցը կողմնորոշված է վաղուց ի վեր հայտնի մոտեցումը՝ երեխան մաքուր տախտակ է. ինչ գրես, այն էլ կվերցնի: Ահա թե ինչու ուսուցման համակարգը կառուցված է այն մոտեցման վրա, ըստ որի՝ երեխան չի կարող իմանալ՝ ինչն է լավ, ինչ է պետք սովորել և իմանալ: Ահա թե ինչու մեծահասակներն են որոշում, թե ինչպես, ինչ եղանակներով և մեթոդներով պետք է սովորեցնել երեխային: Առաջնայնությունը տրվել է իմացական կարողությունների և հիշողության զարգացմանը: Առաջին սերնդի ինդիգո երեխաների համար չափազանց դժվար էր սովորել ուսուցման ավանդական համակարգի պայմաններում. այդ խելացի հրաշամանուկները չէին բացահայտում իրենց հնարավորությունների նույնիսկ կեսը: Նրանց համար տաղտկալի էր սովորել. քանի որ ուսուցումը չէր համապատասխանում նրանց բնածին ընդունակություններին և հակումներին: Այդ երեխաներին որակում էին խելացի, սակայն ծուլ և կամակոր:

Ինդիգո երեխաների սերնդի ի հայտ գալն առաջին հերթին պայմանավորված է հասարակական գիտակցության փոփոխությամբ, որը հանգեցնում է կրթության և դաստիարակության վերաբերյալ մոտեցումները, ուսումնադաստիարակչական ժամանակավրեպ տեխնոլոգիաները փոխելու անհրաժեշտության: Արդի ժամանակաշրջանի համաշխարհային տեղաշարժերը, գլոբալացման գործընթացները, միջազգային, այդ թվում կրթական կառույցներին ինտեգրումը, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հարաճուն ներդրումները, նոր հազարամյակի մարտահրավերները կրթական համակարգի բարեփոխման նոր պահանջներ են առաջադրում, որի համատեքստում առաջնային է դառնում նոր մտածելակերպ և արժեհամակարգ ունեցող երեխաների կրթության և դաստիարակության հիմնախնդրի վերանայումը: Կրթության ավանդական մոտեցումներն արդեն իսկ իրենց տեղը գիշել են կրթության անձնակենտրոն հարացույցին, հատուկ օժտվածություն ունեցող երեխաների համար մտեղծվում են ուսումնական տարբեր կենտրոններ, մանկապարտեզներ, դպրոցներ, ակումբներ, կազմվում են անհատական ծրագրեր, մշակվում են ռազմավարություններ: Ծրագրերն ընդգրկում են աշխատանք ոչ միայն երեխաների, այլև ծնողների հետ, որպեսզի ընտանիքում ստեղծվի փոխընթերցման ներդաշնակ մթնոլորտ: Այդ ծրագրերը հիմնված են հետևյալ

սկզբունքի վրա. յուրաքանչյուր երեխայի մեջ առկա է ստեղծագործական հզոր ներուժ, որը պետք է բացահայտել, նպատակային ուղղորդել և համապատասխան զարգացնող միջավայր ձևավորել: Քանի որ շատ երեխաներ տիրապետում են էքստրասենսորային ընդունակությունների, ապա մշակվում են դրանց զարգացման նոր մեթոդներ: Մեծ ուշադրություն է հատկացվում ֆիզիկական վարժություններին, որոնք հիմնված են շնչառական տեխնիկայի, յոգայի և մեդիտացիայի վրա. դրանք երեխային օգնում են հոգևոր հանգստություն ձեռք բերել, տիրապետել ինքնակառավարման մեթոդներին և ուշադրության կենտրոնացմանը, որը ինդիգո երեխաների պարագայում հինախնդրային է: Ծրագրերի հիմնական տեսանկյուններից է երեխայի ուսուցման և զարգացման նկատմամբ ամբողջական մոտեցումը. երեխային տրվում է ստեղծագործելու հնարավորություն՝ նրան չսահմանափակելով որոշակի գործունեության շրջանակներում. երեխան կարող է ընտրել գործունեության այն տեսակը, որն ինքն է նախընտրում: Կարևոր է, որ երեխան բավականություն ստանա, բավարարի իր հետաքրքրությունը, նրան ինքնարտահայտման հնարավորություն տրվի: Քանի որ նրանք շատ զգայուն են, ապա պարապմունքները պետք է անցկացվեն կրթական բաց և հագեցած զարգացնող միջավայրում: Այսօր աշխարհում լայնորեն հայտնի են Մարիա Մոնտեսսորիի մանկապարտեզներն ու դպրոցները, որտեղ կարևորվում են երեխայի բնական հակումների առաջնայնությունը, ազատությունը, ընտրությունը, փոխադարձ ուսուցումը և կրթական միջավայրը: Լատվիայում՝ Դրուստի փոքրիկ քաղաքում, Ռիգայի համալսարանի դասախոս Օյարս Ռոդեն հիմնել է իր երագանքի դպրոցը անսովոր ընդունակություններով օժտված երեխաների համար. ուսուցումը հիմնված է սիրո և ազատության վրա: Յուրաքանչյուր աշակերտ ունի ուսուցման իր անհատական ծրագիրը: Տնօրենը համոզված է՝ մեծահասակների հիմնական սխալն է փորձել այդ երեխաներին դարձնել այնպիսին, ինչպիսին իրենք են: ԱՄՆ-ում լայնորեն հայտնի է Սադբերի Վելլի դպրոցը(Sudbury Valley School), որի հիմնական սկզբունքների թվում են՝

- երեխաներն ինքնուրույն են որոշում, թե ինչպես օգտագործեն իրենց ժամանակը, ոչ ոքի չեն հարկադրում յուրացնել որոշակի ուսումնական նյութ կամ մասնակցել ուսումնական գործունեության տվյալ ձևին,
- դասը կազմակերպվում է ըստ երեխաների պահանջի, աշակերտներն ու դասավանդողները հավասար իրավունքներ ունեն,
- գոյություն ունեն կանոններ. յուրաքանչյուր շաբաթ դրանք քննարկվում են դպրոցական ժողովում, որտեղ յուրաքանչյուր աշակերտ և ուսուցիչ ձայնի իրավունք ունի. կանոնները հավասարապես ընդունելի են բոլորի կողմից,

- դպրոցական ժողովում ընծրված իրավաբանական կոմիտեն դիտարկում է կանոնների խախտման վերաբերյալ բողոքները և կարող է պատիժներ սահմանել, առկա է բողոքարկման հնարավորություն,
- դպրոցական ժողովը գաղտնի քվեարկությամբ որոշում է, թե ով է հաջորդ տարի լինելու ուսուցիչ,
- չկա արտաքին գնահատում՝ ոչ թվանշան, ոչ գրավոր բնութագրումներ:

Ակնհայտ է դպրոցավարման այս մոդելի նմանությունը Ռուդոլֆ Շտայ-ների Վալդորֆյան դպրոցներին, որոնք ամբողջ աշխարհում լայն տարածում ունեն:

Հետազոտողները վկայում են, որ ինդիգո երեխաների ուղեղի աջ և ձախ կիսագնդերը հավասարաչափ զարգացած են. դա նշանակում է, որ տրամաբանական և պատկերավոր բարձր զարգացած մտածողությունը հավասարակշռված է, և ինդիգո երեխաներն ի վիճակի են լուծել ոչ միայն տեխնիկական, այլև այնպիսի խնդիրներ, որոնք պահանջում են բուռն երևակայություն և ստեղծագործական մոտեցում:

Ինդիգո երեխաներն արժանապատվության, սոցիալական արդարության ուժեղ զգացում ունեն, օժտված են ընկալման և մտածողության բարձր մակարդակով, անսովոր զգայունությամբ, հեռագգացողությամբ: Նրանց մեջ իմացական բարձր մակարդակը համադրվում է ստեղծագործական ներուժի հետ, հակված են գիտելիքներն էմպիրիկ ճանապարհով ձեռք բերելու: Դեռևս վաղ տարիքից այդ արտասովոր երեխաները շրջապատողներին ցույց են տալիս իրենց անհատականությունը, չեն ցանկանում ենթարկել և ենթարկվել, բոլոր արարքներն իրականացնում են համաձայն ինտուիտիվ զգայականության և սառը բանականության, շրջակա աշխարհի նկատմամբ սեփական հայացք ունեն, որը հաճախ չի համընկնում շրջապատի կարծիքին: Համոզվում, սպառնալիքը, ներգործության ավանդական մեթոդները նրանց վրա կարող են միանգամայն հակառակ ազդեցություն ունենալ: Այդ երեխաներն անմիջապես յուրացնում են ուսումնական տեղեկատվությունը և մնացած ժամանակն անուշադիր են ուսման նկատմամբ, արագորեն կենտրոնանում են գործունեության որևէ տեսակի վրա և նույնքան արագ էլ շեղվում, նախընտրում են գիտելիքներ ստանալ սեփական փորձով: Սովորական երեխաների շրջապատում անհարմարավետ են զգում, կարող են դժգոհել, որ իրենց ոչ ոք չի հասկանում, անվրեպ ընտրում են ուսումնառությամբ սեփական ձև և անգիջում հետևում դրան, եթե նույնիսկ ծնողներն ու ուսուցիչները դեն են, հաճախ են խախտում համընդհանուր ընդունված կանոններն ու արգելքները: Ինդիգո երեխաների մեջ

հաճախ են նկատվում քնի խախտում, գիշերային մղձավանջներ, հակված են որոշ ֆոբիաների(օրինակ՝ հարազատ մարդուն կորցնելու վախ)։ Ինդիգո երեխաները չեն հանդուրժում բռնություն ո՛չ իրենց, ո՛չ ուրիշների, ո՛չ բուսական ու կենդանական աշխարհի նկատմամբ։ Մասնագետների կողմից բացահայտված են բացառիկ ընդունակություններ, որոնց տիրապետում են ինդիգո երեխաները՝ պայծառատեսություն, այլոց մտքերը կարդալ, կանխատեսում, մարգարեություն, հեռագագողությամբ անմիջականորեն և տարածության մեջ հաղորդակցում։ Ժամանակակից հասարակության խնդիրն է բացահայտել նրանց օժտվածության դրսևորումները, ճանաչել հակումները, մեկնաբանել աշխարհընկալման մեխանիզմները։ Այս ամենի բացառումը կամ ժխտումը կարող է անկանխատեսելի հիմնախնդիրներ առաջացնել դաստիարակության գործընթացում, քանի դեռ ծնողներն ըստ սովորության ձգտում են երեխաներին դաստիարակել ըստ արմատացած կարծրատիպերի և համոզված են, որ իրենց երեխան կենսական գիտելիքներ չունի։ Երեխաների և ծնողների ու մանկավարժների հայացքների, ըմբռումների, պատկերացումների անհամապատասխանությունը տարածայնություններ է ծնում, որոնք կարող են վերածվել բախումային իրավիճակների, նյարդային ցնցումների, անբուժելի հիվանդությունների։

Մասնագետները համոզված են, որ ինդիգո երեխաներին ճանաչելու լավագույն եղանակը նրանց հետ շփվելն է, և առաջարկում են որոշ խորհուրդներ ու հանձնարարականներ.

- Ինդիգո երեխաներին կառավարելու համար նախևառաջ սիրեցեք նրանց, հավատացեք նրանց ինքնազարգացման հնարավորություններին ու ներքին ներդաշնակությանը, վստահեք, հարգալից եղեք և հաղորդակցվեք։
- Վաղ մանկությունից մտերմացեք ինդիգո երեխայի հետ, մի վիրավորեք նրա արժանապատվությունը. ինդիգո երեխան չի հանդուրժում ստորացում, և հնարավոր է, որ վրեժխնդիր լինի։ Նույնիսկ դեպքեր են եղել, որ նրանք դիմել են իրավապահ մարմիններին և համապատասխան ատյաններին։ Ուշադրություն դարձրեք հատկապես խոսքի հնչերանգին, հրաժարվեք «ծնող-երեխա» կամ «ուսուցիչ-աշակերտ» փոխհարաբերությունների ավանդական մոդելից։
- Վաղ տարիքից արդեն երեխային հաղորդակից դարձրեք այն ամենին, ինչ կատարվում է շուրջը. նրա հասկացողությանը մատչելի բացատրեք հնարավորինս ամեն ինչ։ Նրան մի՛ պարտադրեք Ձեր տեսակետը։

- Մի՛ խորամանկեք և մի՛ ստեք. նրանք զգում են անկեղծ սերը և չեն կարող գտնվել այն միջավայրում, որտեղ իշխում է կեղծիքը: Ինդիգո երեխաներին հնարավոր չէ խաբել. եթե չեք ցանկանում, որ Ձեր և Ձեր երեխայի միջև անդունդ գոյանա, փորձեք անկեղծորեն խոսել այն ամենի մասին, ինչ նա ցանկանում է լսել:

- Ընտրության հնարավորություն ու ազատություն տվեք տարբեր հանգամանքներում և իրավիճակներում՝ սննդի ընդունում, ջուր, խաղ, հագուստի ընտրություն, աշխատանք, ուսում. դրանով Դուք կնպաստեք կենսական դրդապատճառների ձևավորմանը: Ընտրության ազատությունը ևս կարգապահության դրսևորում է: Եթե Դուք ցանկանում եք, որ Ձեր երեխան ճիշտ ընտրություն կատարի, նրան ևս մեկ անգամ ընտրություն կատարելու հնարավորություն տվեք սխալ ընտրության դեպքում(եթե, իհարկե, բազմակի ընտրությունը չի սպառնում կյանքին, առողջությանը և բարոյականության ընդունված նորմերին): Հնարավորություն տվեք սեփական փորձով զգալ յուրաքանչյուր սխալի կամ ոչ հաջող ընտրության իրական հետևանքները:

- Մի՛ վախեցրեք և մի՛ գողացեք երեխայի վրա. բուռն հույզերը, քննադատությունը, վիրավորանքը նրա վրա հակառակ ազդեցությունը կունենան և կբացահայտեն Ձեր իսկ անկարողությունը: Նշանաբան դարձրեք սերը և անկեղծությունը: Ձեր աջակցությունը երեխայի մեջ պետք է անվտանգության և ապահովության զգացում ձևավորի:

- Ինդիգո երեխաների հետ վարվեք որպես հավասարի և մեծի հետ, սակայն մեծահասակի պարտականություններ մի բարդեք:

- Խնդրանքը մի՛ վերածեք հրամանի. նրանք չեն հանդուրժում հրամայողական տոնը և անպայման պարտականություններից խուսափելու եղանակներ կգտնեն: Խնդրեք համգիստ, մեղմ, զուսպ, սակայն կայուն. խնդրանքը հիմնավոր ձևով ներկայացրեք, այլ ոչ իորինված պատճառներով:

- Երեխայի մեջ կուտակված էներգիան խելամիտ ծախսելու հնարավորություն տվեք. նա ուրախ կլինի մեծահասակի նուրբ աջակցությամբ սահմանել խաղի կանոնները: Ավելի հաճախ վստահեք որոշումներ ընդունելու հարցում:

- Ստեղծագործելու համար պայմաններ ստեղծեք. ինդիգո երեխան սիրում է ստեղծագործել, և այդ հողի վրա Դուք կարող եք նրա հետ բարեկամանալ:

- Մի՛ մեղադրեք և ամոթանք մի՛ տվեք ոչ մենակ, ոչ ուրիշների ներկայությամբ. եղեք բնական և սրտաբաց. եթե Դուք անկեղծ սիրեք երեխաներին և վստահեք, նրանք իրենց հոգին կբացեն Ձեր առաջ: Նրանց համոզիչ և կառու-

ցողական առաջարկություններ արեք, բոլոր երեխաները կարիք ունեն հոգատարության, աջակցության, ուշադրության, խրախուսման:

- Ինդիգո երեխաների հետ հաղորդակցման տոնը պետք է լինի հուզականորեն ջերմ, ոգևորող և խթանող, նրա ըմբռնողությանը մատչելի: Խոսքային և ոչխոսքային հաղորդակցումը պետք է արտահայտվի սիրով, քնքշանքով, բարյացակամությամբ, փոխազդեցության ընթացքում երեխայի մեջ պետք է վստահություն ձևավորվի իր հնարավորությունների նկատմամբ: Նա պետք է համոզված լինի, որ իր ֆիզիկական, հուզական, իմացական և ստեղծագործական պահանջները կարող են արձագանք են գտնում ուսուցիչների և ծնողների կողմից:

- Բոլոր տեսակի փոխհարաբերությունները պետք է հիմնված լինեն վստահության, փոխըմբռնման և միմյանց նկատմամբ հարգանքի վրա: Հիշեցեք, որ նոր մտածելակերպով և ընդունակություններով երեխաներին հասկանալու միակ միջոցը Ձեր իսկ մտածողությունը և պատկերացումները փոխելն է. կոպիտ սխալ է երեխայի զարգացմանը նպաստող մեթոդների թվում առաջնային դիտարկել հարկադրումը, պարտադրանքը: Նրանց ինքնաբերական, ինքնատիպ դրսևորման, ինքնուրույնության հնարավորություն ընձեռեք, խուսափեք պատրաստի պատասխաններ և լուծումներ հրամցելուց:

- Երեխաների ուշադրության կենտրոնացմանը խթանող այլընտրանքային միջոցներ օգտագործեք(օրինակ՝ լարվածությունը թուլացնող վարժություններ, գունաթերապիա, արոմաթերապիա և այլն):

- Հիշեցեք, որ պատիժը ոչ թե կարգապահություն է հաստատում, այլ, ընդհակառակը, սարսափ, ատելություն, բացասական հույզեր, պոռթկում և բախումնային իրավիճակներ է հարուցում: Պատիժը կարող է երեխային դարձնել դաժան, անհավասարակշիռ: Յուրաքանչյուր իրավիճակում քննարկումը և երկխոսությունը կարևոր են արարքի և հետևանքի տրամաբանական հիմնավորման համար, թույլ են տալիս տիրապետել իրավիճակին, որոնել ստեղծված հիմնախնդրի լուծման ուղիներ՝ ընդամենը պահպանելով երեխայի արժանապատվության զգացումը:

- Ինդիգո երեխաները տիրապետում են ապագայի նկատմամբ նոր հայացքների ու համոզմունքների. մի՛ քամահրեք նրանց երևակայությունը, լսե՛ք նրանց և ոգեշնչե՛ք, ըմբռնումով մոտեցե՛ք նրանց երևակայությանը, քանի որ դրանում է ամփոփված ապագայի տեսլականը: Օգնե՛ք նրանց այնպիսի ընտրություն կատարել, որը մարդկությանը կտանի խաղաղության, համակեցության, առաջադիմության և ներդաշնակության ուղիով:

- Խաղացել ք նրանց հետ, ուրախացել ք նրանց հաջողություններով, անկեղծ զարմացել ք, հավատ ներշնչել իրենց ուժերի նկատմամբ, ծիծաղել ք նրանց հետ և երբեք մի՛ մոռացել, որ ծիծաղը հույս է, ուրախություն, սեր և խաղաղություն:

- Հետևողական եղել: Ասել ք այն, ինչ մտածում եք, և արել ք այն, ինչ խոստացել եք:

Ինդիգո երեխաների համար լավագույն դաստիարակներ կարող են լինել նրանք, ովքեր իսկապես կոչված են մանկավարժ լինելու, գիտելիքներ ունեն հոգու, բանականության և ներքնաբանական մասին: Միայն այդպիսի մանկավարժներն են ի գործու գտնել ինդիգո երեխաների հետ աշխատելու ճիշտ մոտեցումներ ու մեթոդներ: Այնուհանդերձ եթե մույնիսկ շատերն են պատրաստ ընդունելու նոր ժամանակներն իրենց բոլոր փոփոխություններով, միևնույնն է, մարդիկ ընդհանուր առմամբ կառչած են հնին: Մենք ընդդիմանում ենք, երբ երեխաներն ինչ-որ բան անում են ոչ այնպես, ինչպես մենք ենք պատկերացնում: Մենք շարունակում ենք դատել, պնդել, մեղադրել, վախենալ, հաճախ չենք կարողանում բացարձակ անկեղծ լինել ո՛չ մեր, ո՛չ ուրիշների նկատմամբ՝ թաքնվելով բարեկրթության, սովորույթի և ավանդապաշտության դիմակի տակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ли Кэролл, Дж. Тоубер, Дети индиго.-Киев: София, 2007.-240с.
2. Ли Кэролл, Дж. Тоубер, Дети индиго. 10 лет спустя.-Киев: София, 2009.-384с.
3. Новый словарь русского языка. Толково-словообразовательный. 2005. Ефремова Т. Ф. 136 тыс статей.
4. Tappe N. Understanding your life through color: Metaphysical concepts in color and aura. Starling Publishers, 1986.
5. <http://www.indigo.e-puzzle.ru/forum>.
6. <http://adhd-kids.narod.ru/articles/monina.html>.